Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ՉՈՐՍ ՏԱՐԻ

Ինձ համար էլ անսպասելի կերպով, «Ավանգարդի» 1988 թ. № 62-ում հրատարակված «Թանկագին բարեկամներ» հոդվածս լայն ասուլիսի ու հետաքրքրության տեղիք տվեց։ Եղած բազմաթիվ հեռախոսազանգերից, սակայն, հիշարժան էր մեկը, որը հնչեց մեր տանը շուրջ մեկ-մեկուկես շաբաթ առաջ։ Տղամարդու մի հուզված բարիտոն խառնելով ու շփոթելով բառերը տեղեկացրեց, որ կարդացել ու շատ հավանել է իմ գրածը և հավելեց, որ այնտեղ հիշատակված անուններից մեկը՝ Պատրիկ Սարոյանը, հենց ինքն է։ Ավելի բարեպատեհ առիթ չէի էլ կարող երազել, ուստի անհապաղ պայմանավորվեցի հանդիպելու համար, և հենց նույն օրը թուղթ ու մատիտով «զինված» հասա Թումանյան փողոցի № 6 շենք, որի 9-րդ բնակարանում ապրում էր ինձ հետաքրքրող Պատրիկ Սարոյանը։

Ասող-խոսող, կատակախոս մարդ էր իմ «հերոսը», խոսքը հաճախ համեմում էր սրամիտ բառախաղերով ու երգիծական դարձվածքներով, սակայն այդ ամենը մեկից ջնջվեց, երբ նա սկսեց պատմել իր կյանքի ոդիսականը։ Աչքերում թագավորեց մի տամուկ մռայլ, պատմելու հետ միաժամանակ դեմքը սկսեց ջղաձգվել, բառերը սկսեցին արտասանվել տառապալից ճիգով ու ներքին լարումով։ Զգացի, որ նրան տհաճ էր վերհիշել այդ ոդիսականը, որ վերքի սպին, չնայած տարիների համր հեռավորությանը դեռ շարունակում է ցավ պատճառել, մանավանդ երբ ես իմ հարցերով քրքրում էի այդ սպին։ Բայց պատմում էր։ Հաճախ լռում էր իրեն հավաքելու համար կամ պարզապես սպասում էր, որ դատարկվեն լցված աչքերը, երբեմն մտահոգ կենտրոնանում էր՝ տվյալ փաստը կամ թիվը ավելի ճիշտ մտաբերելու նպատակով, և պատմում էր։

Այսպես է ծնվել ստորև ներկայացվող հոդվածը։

«ԸՆԴԱՄԵՆԸ» ՉՈՐՍ ՏԱՐԻ

Կենսագրական տվյալներ. Պատրիկ Ավետիսի Սարոյան, ծնվել է 1906 թ. հոկտեմբերի 18-ին Վանում, փայտագործ-արհեստավորի ընտանիքում։ Ընտանիքը

եռանդուն մասնակցություն է բերել Վանի ինքնապաշտպանական կռիվներին, սկսած դիրքերում կռվելուց (հայրը, հորեղբայրները), մինչև կռվողներին ուտելիք հասցնելը, վիրավորների համար փաթաթաններ պատրաստելը (մայրը, մորաքույրները, տան երեխաները)։ Ապա՝ 1915 թվական, վանեցիների զանգվածային գաղթ դեպի «ռսի Հայաստան», որոնց թվում նաև Սարոյանների ընտանիքը։ Երևանում լավ-վատ տեղավորվելուց հետո, տասնամյա Պատրիկը աշխատանքի է անցնում քաղաքի «ՈՒրադրիս» տպարանում որպես գրաշար և աստիճանաբար դառնում է իր գործի հմուտն ու քաջագիտակը։ Տպարանում աշխատելը մի մեծ առավելություն էլ ունեցավ՝ ծանոթացավ Աղասի Խանջյանի, Միշա Ենգիբարյանի, Եղիա Չուբարի, Ազատ Վշտունու, Ստեփան Զորյանի, Ակսել Բակունցի, Եղիշե Չարենցի, Գևորգ Աբովի և էլի ուրիշների հետ։ Չարենցի հետ ծանոթությունը շուտով վերաճեց մտերմության, ապա բարեկամության։ Բանաստեղծը միայն նրան էր տալիս շարելու իր «ստիխները», իսկ նա էլ դրանք անգիր էր անում ու արտասանում։ Չարենցի դրդմամբ էր, որ Պատրիկ Սարոյանը 1923 թ. ընդունվեց Բանֆակ, որն ավարտելուց հետո՝ 1927 թվին, Համալսարանի պատմա-տնտեսագիտական ֆակուլտետ։ Հաջողությամբ այդ էլ ավարտելուց հետո՝ 1933-ին, Ա. Բակունցի հրավերով նշանակվեց «Գյուղհրատի» դիրեկտորի տեղակալ և հրատարակության բաժնի վարիչ, վարելով այդ պաշտոնները երեք տարի։

Եկավ 1936 թիվը...

Այդ տարի Հայաստանում «բացահայտվեց» Ներսիկ Ստեփանյանի ստեղծած և նրա ղեկավարությամբ գործող աջ-տրոցկիստական, նացիոնալիստական, տեռորիստական, դիվերսիոն-լրտեսական, դաշնակցական, շովինիստական կազմակերպությունը, որն իր առջև խնդիր էր դրել զինված ապստամբության միջոցով Հայաստանն անջատել Ռուսաստանից։ Իսկ քանի որ Ստեփանյանը հարցաքննության ժամանակ ոչ միայն «խոստովանել» էր այդ բոլորը, այլև մինչև վերջին մարդը «ասել» էր իր կազմակերպության անդամների անունները, ամբողջ հանրապետությունով ծայր առան ձերբակալությունները։ Եվ մի օր էլ...

Նրանք եկան 1937 թ. օգոստոսի 9-ին, գիշերվա ժամը 2-ին։ Եկան երեքով։ Հետագայում իմացավ ովքեր էին՝ Համբարձում Արոյան, Գուրգեն Մուրադյան և Սուրեն Հովհաննիսյան։ Սկսեցին խուզարկությունից, չնայած դա ավելի շուտ քարուքանդ անել էր հիշեցնում։ Նախանձելի ջանասիրություն դրսևորեցին հավաքելու համար այն գրքերը, որոնց վրա կային Ալազանի, Մահարու, Բակունցի, Նորենցի և մանավանդ Չարենցի մակագրությունները։ Չթաքցված հրճվանք ապրեցին, գտնելով Չարենցի բանաստեղծությունների ժողովածուն, որի վրա կար հեղինակի՝ «Շատ սիրելի իմ Պատրիկին, իմ գրքերի հուր-շարողին, իմ մտքերի տարածողին» մակագրությունը։ Խոսակցություն չստացվեց, քանզի Սարոյանի հարցումներին տրվող միակ պատասխանը լինում էր ընդամենը մի նյարդային «Կիմանաս»-ը։ Իրեն՝ Պատրիկ Սարոյանին, թույլ չտվեցին նույնիսկ հրաժեշտ տալ անգամ կնոջն ու երեխաներին։ «Հետաքննությունն» ավարտելուց հետո «քննիչները» իրենց «ամբաստանյալի» հետ դուրս եկան Թումանյան փողոցի № 6 շենքից...

Ծանոթություն. Մեկ առ մեկ նայել եմ Պատրիկ Սարոյանի «Անձնական գործում» պահվող բոլոր փաստաթղթերը։ Նրա բանտարկությունը թույլատրող և քաղաքային դատախազի ստորագրությամբ վավերացված կարգաթուղթ (սանկցիա) այնտեղ չկար։ Չկար այդ ակտն իրականացնելու համա գոնե բանավոր կարգադրության որևէ հետք անգամ։ Պատրիկ Սարոյանը կալանքի տակ էր վերցվել «հենց այնպես»։

* * *

ՆԳԺԿ-ի ներքնահարկ, 20-րդ բանտախուց։ Սա նշանակում էր բետոնե հատակով, պատի վերևի մասում մի քանի վանդակապատ պատուհաններ ունեցող սենյակ։ Այստեղ «տեղաբաշխված» էին շուրջ հարյուր հոգի «նախնականներ»՝ նախնական կալանքի վերցվածներ, իսկ քանի որ այդ թիվը ավելի շատ ավելանում էր, քան պակասում, ապա եկավ մի ժամանակ, որ «նախնականների» թիվը հասավ հարյուր քսան հոգու։ Յուրաքանչյուրին հասանելիք տարածությունը, բնականաբար, խիստ սահմանափակ էր։ Այն տատանվում էր շուրջ երեսուն սանտիմետր լայնքի-երկայնքի սահմաններում։ Քիչ պատկերավոր ասած՝ այնքան, ինչքան մակերես ունեն մեր այժմյան խոհանոցային աթոռների նստատեղերը։ Օգոստոսյան կատաղի շոգը, միախառնված

մարմիններից արտազատվող քրտինքի տհաճ հոտի, ծխելու հետևանքով բանտախցում քուլա-քուլա ծփացող ծխախոտի ծխի հետ, այդ էլ «համեմված» բանտային այլևայլ ծանր, կծու «բուրմունքներով», այնպիսի հեղձուցիչ օդ էին ստեղծել բանտախցում, որ Պատրիկ Սարոյանը քիչ մնաց ուշաթափվեր դեռ դռնից ներս մտնելուն պես։

Աշխատանքային վերակարգը շատ որոշակի էր։ Ցերեկվա ընթացքում կալանավորներից և ոչ մեկը իրավունք չուներ նստել կամ պառկել, իսկ դա նշանակում էր կանգնած մնալ շուրջ տասնչորս ժամ, և «ազատությունը» տրվում էր երեկոյան ժամը տասից հետո միայն։ Իսկ երեկոյան ժամը տասից հետո էլ սկսվում էին հարցաքննությունները, որոնք ոչ քիչ դեպքերում տևում էին մինչև առավոտ։

«Արքայական» այս իրավիճակը ասես լրացվում ու ամբողջացվում էր գիշերը։ Լավ-վատ ազատվելով ցերեկվա մղձավանջից, մի կերպ կծկված իր երեսուն սանտիմենտրի վրա, Պատրիկ Սարոյանը ժամը տասից հետո մտադրվում էր գեթ փոքր-ինչ հանգստանալ, սակայն տարտղնած լռությունը հանկարծ պատռում էին վերևի հարկից լսվող տղամարդկային տվայտալից գոռգոռոցները կամ գետնին ընկնող մարմինների սարսռեցնող թրմփոցները, ավելի հաճախ՝ սպառնալից հիշոցների ու փողոցային զազրախոսությունների անզուսպ հեղեղը։ Նման դեպքերում կողքի ընկերը՝ Աշոտ Հովհաննիսյանը, անճանաչելիորեն մռայլվում էր, վշտացած «ա՜խ» էր անում Արտո Եղիազարյանը, ինչ-որ հետաքրքիր բան էր սկսում պատմել պապի մասին Կոնստանտին Աբովյանը, իր օրական հասանելիքը՝ վեց հարյուր գրամ հացն ու քսան գրամ շաքարը հենց այդ պահերին էր սկսում ուտել Վահան Թոթովենցը...

Քանի օր անցավ այդպես, արդեն չէր հիշում, բայց մտքում աստիճանաբար հասունանում էր հարցը. ինչո՞ւ իրեն չեն տանում հարցաքննության։ Հարցն անհանգստություն դարձավ, անհանգստությունը սկսեց կրծել սիրտը։ Տանեն հարցաքննության, մի քանի խոսքով պատմի իսկությունը, ճշտի իր նկատմամբ եղած այս խայտառակ թյուրիմացությունը և տուն գնա։ Իսկ որ տեղի էր ունեցել թյուրիմացություն, Պատրիկ Սարոյանը չէր էլ կասկածում։ Դե ուրիշ էլ ինչ կարող էր լինել։ Նորից ու նորից էր վերլուծում իր կյանքի ուղին, մտքում վերականգնում էր այլևայլ փաստեր,

մանրամասներ, դրվագներ... Ավելի անաղարտ կենսագրություն էլ ինչպես է լինում։ Չէ, անկասկած, այստեղ պարզ ու հասարակ թյուրիմացություն է։

Բանտախցի «հնաբնակները», լսելով Պատրիկի տրտունջը բոպե առաջ հարցաքննության գնալու մասին, մռայլ ու խորհրդավոր ժպտում էին, իսկ ծերուկ գյուղատնտես Գեորգ Գրձելյանը նույնիսկ հեգնեց. «Հարցաքննությանը կարոտ մնաս, Պատրիկ»։ Ինչո՞ւ էին այդպես պատասխանում, ինչո՞ւ նույնն ասաց 20-րդ բանտախցի վերահսկիչը, – չէր հասկանում, բայց համառորեն պնդում էր իրենը, խնդրում, պահանջում։

Քանի՞ օր ու շաբաթ անցավ տաժանելի անորոշության մեջ, դժվար էր ասել, բայց մի երեկո, երբ բացվեց բանտախցի դուռը և հնչեց վերահսկիչի «Պատրիկ Սարոյան դուրս արի» նախադասությունը, ուրախ հուզմունքի դող անցավ ամբողջ մարմնով։ Վերջապես իրեն տանում են հարցաքննության։

* * *

Նույն շենքի չորրորդ հարկ։ Դատարկ սենյակում գրասեղանի հետևում նստած էր քննիչը։ Սենյակում կային ևս 12 հոգի։ Դրանց թվում ճանաչեց իրեն կալանավորած երեք հոգուն։ Սկզբում զարմացավ. այսքան մարդիկ այստեղ ի՞նչ են անում։ Հարցի պատասխանը դեռ չգտած՝ քննիչը նրան մեկնեց տարօրինակ վերնագրով մեքենագրված մի թուղթ. «Մեղադրական եզրակացություն»։ Նայեց տարակուսած. «Դեռ հարցաքննություն չեղած՝ ի՞նչ եզրակացություն»։ Պատասխան. «Քիչ խոսիր։ Կարդա, իմացիր հանցանքդ, ավելացրու քո գործակիցների անունները և ստորագրի»։ Կարդացել է և իմացել իր «հանցանքը»։ 1. Մասնակցել է ժողովրդի թշնամի, դաշնակցական Աղասի Խանջյանի հուղարկավորությանը և դրական է արտահայտվել նրա մասին։ 2. Մտերմիկ կապեր է ունեցել նացիոնալիստներ, ազգային շովինիստներ Եղիշե Չարենցի, Վահրամ Ալազանի, Վահան Թոթովենցի հետ և տպարանում տարածել է նրանց նացիոնալիստական գաղափարները։ 3. Տպարանում տարիներ շարունակ գործել է տրոցկիստական-դաշնակցական-վնասարարական-տեռորիստական խմբակ, որը նպատակ է ունեցել անհատական տեռորի միջոցով սպանել Ստալինին, Բերիային,

Մոլոտովին և մյուսներին։ Պատրիկ Ավետիսի Սարոյանը հանդիսացել է այդ խմբակի ղեկավարը։ Խմբակի անդամներից են եղել...

Մեքենագրված թուղթը վճռականորեն վերադարձրել է քննիչին. «Սա խայտառակ զրպարտություն է, ամբողջովին հերյուրանք։ Ես չեմ ստորագրի, ոչ մի անուն էլ չեմ ավելացնի, որովհետև այդպիսի բան չի եղել»։

Չեն թողել, որ խոսքը շարունակի։

Արտագրում եմ մի հատված Պ. Սարոյանի «Անմոռանալի հուշեր» խորագրով անտիպ հոդվածից. «Ընկա սենյակում գտնվող 10-12 հոգու ձեռքը։ Նրանցից յուրաքանչյուրը խնամքով կանգնեցնում էր ինձ, ապա բռունցքի կամ ոտքի շեշտակի հարվածով նետում դեպի դիմացինը։ Նույնը անում էր դիմացինը։ Ինձ որպես ֆուտբոլի գնդակ այդպես օգտագործերին մի քանի ժամ, իսկ երբ ուշաթափվեցի ու վայր ընկա, սկսեցին գազանաբար խոշտանգել ինձ ու ծեծել բռունցքերով, ոտքով, մերկացած մետաղալարի փնջով, երկաթե քանոնով, մի խոսքով՝ ով ինչով կարող էր։ Արյունլվա ընկած եմ հատակին, ջուր են լցնում գլխիս, ուշքի բերում և նորից սկսում են իրենց գազանային ծեծը, պահանջելով, որ ասեմ իմ հակահեղափոխական գործունեության մասին և ստորագրեմ։ Առանձնապես կատաղի էր Գուրգեն Մուրադյանը։ Նա իսկական սադիստ էր, չուներ մարդկային խղճմտանք և մասնագետ-ծեծող էր։ Զինվորական ծանր սապոգներով հարվածում էր մեջքիս, գոտկատեղիս, երբ երբ շուռ էի գալիս՝ աճուկներիս։ Եվ այդ բոլորը՝ ամենալկտի հայհոյանքների ուղեկցությամբ։ Լույսը բացվելու վրա էր (իմա. հարցաքննությունը տևել էր մոտ տաս ժամ. Ս.Շ.)։ Երկու հոգի ինձ քարշ տալով տարան ներքև, բանտախցի դուռը բացեցին և ներս շպրտեցին՝ ասելով. «Առեք ձեռ լեշը»։

* * *

Պատրիկ Սարոյանը գրեթե կիսամեռ պառկած էր 20-րդ բանտախցի բետոնի հատակին։ Արդեն ամիսներ էր, ինչ շարունակվում էր արյունամիզությունը, իսկ մարմնի վերքերի մեծ մասը հակասանիտարական պայմանների հետևանքով, սկսել էին բորբոքվել։ Էլեկտրալարերի մեծ ու փոքր կտորտանքները խրվել-մնացել էին թիկունքի , մեջքի մաշկի տակ, աշխարհագրական քարտեզի տպավորություն ստեղծելով և անասելի ցավ էին պատճառում։ Օրական մի քանի անգամ գիտակցությունը կորցնելը, զառանցելը

արդեն սովորական բան էին դարձել նրա համար։ Եվ կասկած չկար, թե ինչպիսին կլիներ այս բոլորի տխուր վերջաբանը, եթե չլինեին 20-րդ բանտախցի իր ընկերները։

Սա կյանքիս այն բացառիկ դեպքերից էր, երբ հայոց լեզվում չգտա համապատասխան բառեր, բնութագրելու համար այն վարքագիծը, որ մերձիմահ Սարոյանի նկատմամբ դրսևորեցին ընկերները։ Շարադրում եմ միայն մերկ փաստերը, որովհետև փաստերն իրենք հրաշալի կերպով ներկայացնում են իրենց։ Վերևում չեմ սխալվել, երբ գրել եմ, որ Պատրիկ Սարոյանը պառկած էր բանտախցի հատակին։ Նա իրոք պառկած էր ամբողջ հասակով, տարածված ձեռքերով ու ոտքերով։ Իսկ դա նշանակում էր, որ մոտ քսանհինգ կալանավոր գիշեր ու ցերեկ կանգնած էին մնում, որպեսզի տեղ ազատվեր։ Կրկնում եմ. քսանհինգ կալանավոր, գիշեր ու ցերեկ։ Գործի կազմակերպիչն էր Աշոտ Հովհաննիսյանը։

Բանտարկյալներն իմացան, որ արյունամիզությամբ տառապողին քաղցր թեյ է հարկավոր, ընդ որում օրական մի քանի անգամ։ Եվ իրոք, օրական հինգ-վեց անգամ Սարոյանը քաղցր թեյ էր ստանում, այն էլ ջրի մեծ բաժակով։ Հետո միայն իմացավ, որ ընկերները հոժարակամ զիջել են իրենց քսանական գրամ շաքարները։ Ովքե՞ր են եղել դրանք, քանի՞ օր ու ամիս է տևել այդ զոհողությունը, չիմացվեց։

Զարմանքով նկատել է, որ հացի իր մասնաբաժինը կտրուկ կերպով շատացել է այնքան, որ կուշտ ուտելուց հետո դեռ մի քանի բան էլ ավելանում է։ «Որտեղի՞ց» հարցին հետևել է համոզիչ թվացող պատասխանը. «Հարցաքննության ենթարկվածներին հացը անսահմանափակ է տրվում»։ Նա հետո և այն էլ պատահաբար իմացավ, որ 20-րդ բանտախցի իր ընկերները նրան բաժին են հանել իրենց՝ առանց այն էլ աննշան վեց հարյուր գրամ հացից։ Եվ՝ ամիսներ շարունակ։

Երկաթալարերի կտորտանքները մարմնից հանելու հարցում զարմանալի հմտություն դրսևորեցին Արտո Եղիազարյանը, Ազատ Մարտիկյանն ու Ստեփան Ալլահվերդյանը։ Նրանք եղունգով պատռում էին մաշկի անհրաժեշտ հատվածը, ապա ատամներով դուրս էին քաշում տանջող երկաթալարը։ Նա, ով անում էր դա, պետք է նկատի ունենար, որ դուրս հոսող թարախախառն արյունը լցվելու էր իր բերանը։

... Այս փաստերը կարիք ունե՞ն բացատրականների...

Ինչքա՞ն տևեց այս մղձավանջը։ Չգիտեր, չէր կարող ասել։

...Մի երեկո բացվող բանտախցի դռան մեջ երևաց վերահսկիչը, և լսվեց նրա սարսափելի «Պատրիկ Սարոյան, հարցաքննությա՛ն» նախադասությունը։ Ընկերները հրաժեշտի տխուր հայացքով ճանապարհ դրեցին իրեն։ Բոլորի համար պարզ էր. Պատրիկ Սարոյանը երկրորդ հարցաքննությունից էլ չի վերադառնա։

* * *

Ինքը՝ Սարոյանն էլ էր այդպես տրամադրված՝ չվերադառնալ։ Իհարկե որևէ թուղթ ստորագրել, կամ «Մեղադրական եզրակացության» տակ ավելացնել ընկերների անունները, բացառվում էր, դա չէր անելու։ Բայց հաստատ որոշել էր պահել իրեն հանդուգն, աջ ու ձախ զազրախոսել, խփել-ջանդել, շուռ տալ քննիչի սեղանը։ Ինչո՞ւ։ Որովհետև դրան կհաջորդեր ավելի գազանային ծեծ ու ջարդ, ինքը կմահանար ու դրանով վերջ կտրվեր բոլոր տանջանքներին։ Տարակույսը, սակայն, ծայր առավ հարցաքննության՝ իրեն արդեն ծանոթ սենյակում, երբ նկատեց, որ սենյակում ընդամենը երկու հոգի էին և բարեկամաբար ժպտում էին։ Հետո սեղմեցին ձեռքը, սրտացավորեն աթոռ առաջարկեցին։ Նստեց ծայր աստիճան զարմացած, սակայն ավելի զարմացավ իրեն տրված հարցից. «Քաղաքացի Պատրիկ Սարոյան, ձեզ ինչի՞ համար են բանտարկել»։ Երկրորդը լրացրեց. «Ձեր գործերում ձեր ստորագրությամբ ոչ մի թուղթ չկա, իսկ հարուցված մեղադրանքը անհեթեթություն է, որն իրավաբանական հիմք չունի»։

Լալով, իրար խառնելով բառերը, պատմել է ամբողջ իրողությունը։ Իր ապրած կյանքը, գործունեությունը, վարած պաշտոնները, կապերն ու ծանոթությունները։ ՈՒշադրությամբ լսել են, հարցերի օգնությամբ ճշտել որոշ մանրամասներ և ապա՝ «Դուք ազատ եք, քաղաքացի Սարոյան»։ Մյուսը լրացրել է. «Իջեք բանտախուց, հավաքեք ձեր իրերը և տուն գնացեք»։ Ականջներին չի հավատացել, հետո չթաքցնելով արցունքները, շնորհակալություն է հայտնել և երկու ուղեկցողների հետ աճապարել է «ներքև», հավաքելու ունեցած-չունեցածը, ընկերներին էլ ավետելու իր ազատության բերկրալից նորությունը։ Հուզված իջել է ցած և...

Եվ Պատրիկ Սարոյանին տարել են մահվան բանտախուց։

* * *

Սկզբում պարզապես չի հասկացել, հետո աստիճանաբար իր համար պարզել է զարհուրելի իրականությունը։ Այո, ինքը մահվան բանտախցում է, իսկ այստեղից դուրս են գալիս միայն մի տեղ գնալու համար... Ցավագին «ինչո՞ւ»-ն, որը ծագել է անմիջապես, մնացել է անպատասխան։ Այդ «ինչու»-ն օրեր ու գիշերներ տանջել է, հոգեկան անլուր տվայտանքների տեղիք տվել։ Ինչո՞ւ է ինքը մահվան բանտախցում, ինչո՞ւ։ Ծայր աստիճան լարված նյարդերը դուռ են բացել անհավասարակշիռ արաքներին համար, սկսել է անիմաստ գոռալ, ծիծաղել։ Այսպիսի վայրիվեր ապրումների մեջ, մի օր բանտախցի պատին «հայտնաբերել» է մի բանաստեղծություն՝ եղունգով «գրված» մի քանի տողեր։ Դժվարությամբ կարողացել է կարդալ։

Ամեն վայրկյան սիրով տրտում
Ասում եմ ես՝ մնաք բարով։
Բորբ արևին իմ բորբ սրտում
Ասում եմ ես՝ մնաք բարով։
Մնաք բարով, ասում եմ ես
Ընկերներիս մոտ ու հեռու,
Ոսոխներին իմ հին ու նոր
Ասում եմ ես՝ մնաք բարով։

Ներքևում ստորագրություն՝ Հովհաննես Մոկացյան։

Կարդացել է, էլի՛ է կարդացել։

... Այս փաստը, որքան էլ տարօրինակ թվա, մեզ է հարկավոր, սիրելի ընթերցողներ։ Եվ հարկավոր է այսօր, հենց հիմա։

Առաջին հերթին ինչի՞ մասին են մտածում մահվան դատապարտված կալանավորները։ Մտածում են հայրենի երկրի, սիրելի վայրերի, հարազատների ու մտերիմների մասին։ Արդ՝ գնդակահարության դատապարտված Հովհաննես Մոկացյանը վերջին պահերին հիշել է Վահան Տերյանի «Հրաժեշտի գազելը»։ Հիշել է այնքան, որ պատի վրա եղունգով փորագրել է։ Բանաստեղծի գործի ավելի ճիշտ և, եթե

կարելի է այսպես ասել, դաժանորեն գեղեցիկ քննություն կարելի՞ է պատկերացնել։ ՈՒրեմն գլուխ խոնարհենք մեր դասականի խնկելի անվան առջև, որի բանաստեղծությունը կյանքի ամենաահավոր պահին հոգեկան հենարան ու զորավիգ է դարձրել իր համար գնդակահարության դատապարտվածը և հարգանքով արտասանենք Հովհաննես Մոկացյանի անունը...

* * *

1940 թվականի հունվարի 6-ին Պատրիկ Սարոյանն ազատվեց կալանքից և վերադարձավ տուն։

Իմ հարցազրույցը. Ընկեր Սարոյան ձեզ ինչո՞ւ էին տարել մահվան բանտախուց։

Պատասխան. Չգիտեմ, այդ հարցը մնաց չպարզված։ Երևի հենց այնպես։

Հարց. Իսկ ինչո՞ւ ազատեցին կալանքից։

Պատասխան. Էլի չգիտեմ։ Մի օր բացվեց բանտախցի դուռը և մի երիտասարդ զինվորական ժպտալով ասաց. «Պատրիկ Սարոյան, դուք ազատ եք, տուն գնացեք»։ «Լսե՛լ եմ, – գոռացի ես, – այդ ինձ արդեն ասե՛լ են։ Շուտ արեք, գնդակահարեք, այս տանջանքները վերջանան»։ Բարձրաձայն ծիծաղեց և ինձ թևանցուկ արած տարավ շենքից դուրս։ «Սա Նալբանդյան փողոցն է, – ասաց, – փողոցով իջեք և տուն գնացեք»։ Կամաց-կամաց սկսեցի իջնել փողոցով...

Ավանգարդ, 1988, № 98, օգոստոսի 7